ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Նարինե Խաչատուրյան

- **ԶԲԱՂԵՑՐԱՑ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Բրյուսել (Բելգիայի Թագավորություն)
2019 թվականի հուլիսի 1-3

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

«Ստեղծագործ Եվրոպա» ծրագիր

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի կառավարման կոմիտեի հերթական նիստին

Ս. թ. հունիսին նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի կառավարման կոմիտեում և հուլիսի 1-3-ը գործուղվել եմ Բրյուսել՝ մասնակցելու կոմիտեի 1-օրյա նիստին: Գործուղման ընթացքում 37 երկրների ներկայացուցիչների հետ քննարկվել են «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի առաջիկա քաղաքականության առաջնահերթությունները Արևելյան գործընկերության շրջանակներում:

Քննարկվել են «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի «Մշակույթ» և «Մեդիա» երկու ենթածրագրերի հեռանկարային հարցերը: Հայաստանը դեռ չի միացել «Մեդիա» ենթածրագրին: Այժմ աշխատանքային փուլում է «Կինոյի մասին» օրենքի մշակումը, և անդամակցելը հնարավոր կլինի օրենքի ընդունման և Ազգային Ժողովի կողմից հաստատման, ինչպես նաև մեդիա դաշտի կանոնակարգման պարագայում: Կոմիտեի նիստի ընթացքում քննարկվեց նաև ֆինանսավորման նոր հնարավորությունների և cash back-ի նոր տարբերակների հարցը՝ հատկապես ֆիլմարտադրության ոլորտում:

Հատուկ շեշտադրում արվեց մշակութային լայն համատեղության գաղափարի վրա: Միջմշակութային երկխոսության և մշակութային դիվանագիտության գործնական կիրառումը «Ստեղծագործ Եվրոպայի» առաջիկա ընթացքի հիմնասյունն են լինելու:

2020 թ. լրանում է Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵՄ «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրին: Ծրագրի ղեկավար Բարբարա Գեսսլերի հետ քննարկել եմ այն երկարաձգելու հնարավորության հարցը:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Տեղի են ունեցել համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ անհատական քննարկումներ

- Նորվեգիայի մշակույթի նախարարության ներկայացուցչի հետ

- Բելգիայի Թագավորությունում Վրաստանի Հանրապետության դեսպանատան «Ստեղծագործ Եվրոպա» առաքելության և Վրաստանի համապատասխան գերատեսչության պատասխանատուի հետ

- Բոսնյա-Հերցոգովինայի պատվիրակի հետ

- Հունաստանի պատվիրակի հետ

- Բելգիայի Թագավորությունում Մոլդովայի Հանրապետության դեսպանատան «Ստեղծագործ Եվրոպա» առաքելության հետ:

2. Բելգիայի Թագավորությունում ՀՀ դեսպանատան պատասխանատու տիկին Լիլիթ Շաքարյանի հետ քննարկել ենք ծրագրի «Մեդիա» ենթածրագրին Հայաստանի անդամակցության կարևորության և հրատապության հարցը:

08.07.2019

Նարինե Խաչատուրյան